Դավրիժեցու ողբերում երևում է ոչ միայն այդ պատմիչի մեծ հայրենասիրությունն ու իր ժողովրդին բաժին հասած ողբերգության տանջագին վերապրումը, այլև ժամանակի տարածված վախճանաբանական այն մտայնությունը, ըստ որի՝ ժողովրդին պատուհասած աղետներն ու կոտորածները պատճառաբանվում, նույնիսկ կարելի է ասել՝ արդարացվում էին գործած մեղքերի առատությամբ: Այդ առումով արդեն իրավացի է Գրիգոր Գապպենճյանը, երբ գրում է. «...Հայ ողբերգու մը, իր ցեղին կրած ցավերուն ու տառապանքին գիտակից գրիչ մը, այնքան համեստ ու հաջող, որքան կը ներեր դարուն ընդհանուր ոգին ու ամբողջական նկարագիրը»[41]:

Դավրիժեցու ողբի սկսվածքում երևում են իր ազգի ու ժողովրդի դաժան ճակատագրով տառապող ողբերգուի ներքին ապրումները, նրա հոգեկան կացությունը. «Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր, ճմլին սիրտք մեր, և գալարին աղիք որովայնի մերոյ և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն եկելոյ հասելոյ թշվառութեանս ժողովրդեանս մերոյ» (էջ 86): Ժանրային ներքին օրինաչափությունների ներկայացման առումով բերենք նաև Արիստակես Լաստիվերցու ներքին տվայտանքների վկայագրումը. «Երբ մտաբերում եմ այդ աղետները, խելքս թռչում է, միտքս՝ ցնորվում և ահավոր զարհուրանքից ձեռներս դողալուց՝ չեմ կարողանում շարունակել շարադրանքս»[42]:

Այնուհետև հաջորդում են հռետորական այն հարցադրումները, որոնք վերաբերում են ողբալու կերպին՝ «որո՞վ օրինակաւ՝ և կամ որո՞վ տարազու ողբս առեալ աշխարեսցուք ի վերայ բեկման ազգին և աշխարհին մերոյ» (էջ 86): Իրականում նաև այդ կերպ, այսինքն՝ ձևի որոնման տվայտանքներով էլ է հյուսվում ողբը: Նույն հարցադրումներն առկա են նաև Խորենացու մոտ, ինչպես՝

---

41 ***Գրիգոր Գապպենճյան,*** Հայ ողբերգուներ. Առաքել Դավրիժեցի, «Տաճար», Կ. Պոլիս, 16 հունիս, 1912, համար 23, էջ 338:

42 ***Արիստակես Լաստիվերցի,*** Պատմություն, Երևան, 1971, էջ 33: